

ԱՄՆ-ի գործադիր խորհուրդը եզրափակում է 2025 թ. Հոդված IV-ի խորհրդակցությունը, ավարտում «Պահուստային ծրագրի» շրջանակում վեցերորդ ամփոփիչ ստուգումը, չեղարկում է «Պահուստային ծրագիրը» և հաստատում Հայաստանի հետ «Պահուստային ծրագիր»

ԱՆՀԱՊԱՐ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

- Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր խորհուրդը եզրափակել է 2025 թ. հոդված IV-ի խորհրդակցությունը, ավարտել է «Պահուստային ծրագրի» (SBA) շրջանակում վեցերորդ ամփոփիչ ստուգումը և հաջորդիվ չեղարկել «Պահուստային ծրագիրը» և հաստատել Հայաստանի հետ 36-ամսյա նոր «Պահուստային ծրագիր», որի գումարը 128.8 միլիոն ՓՀԲ (փոխառության հատուկ իրավունք) է (ԱՄՀ-ում Հայաստանի քվոտայի 100 տոկոսը կամ մոտավորապես 175 միլիոն ԱՄՆ դոլար):
- Պահուստային նոր ծրագիրը, որը Հայաստանի իշխանությունները մտադիր են դիտարկել որպես կանխարգելիչ, նպատակաուղղված է կառավարության քաղաքականության և բարեփոխումների օրակարգի շարունակականությանը օժանդակելուն՝ մակրոտնտեսական կայունությունը պահպանելու, կայուն և ներառական աճը խթանելու և աճի տեմպի նվազման ռիսկերից ապահովագրելու նպատակով:
- Հայաստանի տնտեսության կատարողականը բարձր է մնում: Բարձր աճը պահպանվել է, և միջնաժամկետ հեռանկարները նպաստավոր են մնացել: Կանխատեսվում է, որ գնաճն աստիճանաբար կմոտենա ՀՀ Կենտրոնական բանկի թիրախին, իսկ միջազգային պահուստները ակնկալվում է, որ բավարար կմնան:

Վաշինգտոն, ԿՇ – 3 դեկտեմբերի, 2025 թ. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր խորհուրդը եզրափակել է 2025 թ. հոդված IV -ի խորհրդակցությունները¹, ավարտել «Պահուստային ծրագրի» (SBA) շրջանակում վեցերորդ ամփոփիչ ստուգումը և հաջորդիվ չեղարկել է «Պահուստային ծրագիրը» և հաստատել 128.8 միլիոն ՓՀԲ գումարով (ԱՄՀ-ում Հայաստանի քվոտայի 100 տոկոսը կամ մոտավորապես 175 միլիոն ԱՄՆ դոլար) 36-ամսյա նոր «Պահուստային ծրագիր» Հայաստանի հետ: «Պահուստային ծրագրի» չեղարկումը, որի ժամկետը լրանալու էր 2025 թ. դեկտեմբերի 11-ին, նոր «Պահուստային ծրագրի» հաստատման հնարավորություն է տալիս, որը կաջակցի իշխանությունների՝ մակրոտնտեսական կայունության պահպանման ջանքերին և առաջ կմղի նրանց կառուցվածքային

¹ ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածների Հոդված IV-ի համաձայն՝ ԱՄՀ-ն երկկողմ քննարկումներ է անցկացնում անդամների հետ, սովորաբար ամեն տարի: Աշխատակազմի թիմն այցելում է երկիր, հավաքում տնտեսական և ֆինանսական տեղեկություններ և պաշտոնյաների հետ քննարկում տնտեսական զարգացումները և քաղաքականությունը: Վերադառնալով կենտրոնական աշխատակազմը պատրաստում է հաշվետվություն, որը հիմք է ստեղծում Գործադիր խորհրդի կողմից քննարկման համար:

բարեփոխումների օրակարգը և ապահովագրություն կտրամադրի անորոշ միջավայրում:
Իշխանությունները համաձայնություն են տվել այս խորհրդակցության համար պատրաստված՝
Աշխատակազմի զեկույցի հրապարակմանը:²

Խորհրդի կողմից նոր «Պահուստային ծրագրի» հաստատումից հետո, Հայաստանի համար անմիջապես հասանելի կդառնա 18.4 միլիոն ՓՀԻ համարժեք (մոտավորապես 25 միլիոն ԱՄՆ դոլար) գումար: Մնացած գումարին հասանելիություն կտրամադրվի հավասարաչափ մասնավճարներով (տրանշերով)՝ կիսամյակային ամփոփիչ ստուգումների հիման վրա: Հայաստանի իշխանությունները նշել են, որ նախատեսում են այս ծրագիրը որպես կանխարգելիչ դիտարկել:

Չնայած մի շարք ցնցումներին՝ Հայաստանի տնտեսական բարձր կատարողականը պահպանվել է համաշխարհային անորոշ միջավայրի պայմաններում: Իշխանությունների ճկուն քաղաքականության և աշխատուժի ու կապիտալի չկանխատեսված ներհոսքերի շնորհիվ՝ վերջին երեք տարիներին իրական ՀՆԱ-ն միջին հաշվով աճել է տարեկան 8.9 տոկոսով և ակնկալվում է, որ կմնա բարձր՝ 2025 և 2026 թթ. -ին հասնելով համապատասխանաբար 5 և 5.5 տոկոսի:

Տնտեսական հեռանկարը դրական է մնում, ընդ որում՝ կայուն աճով և ՀՀ ԿԲ թիրախին մոտեցող գնաճով: Շրջահայաց քաղաքականությունների շարունակական իրականացումը և բարեփոխումների արագ ընթացքը վճռորոշ կլինեն դիմակայությունը բարձրացնելու և առաջիկա ժամանակահատվածում ներառական և կայուն աճ ապահովելու հարցում:

Իշխանությունների 2026 թ. բյուջեով և ՄԺԾԾ-ով նախատեսվող միջնաժամկետ հարկաբյուջետային կոնսոլիդացումը տեղին են: 2026 թ.-ին նախատեսվող հարկաբյուջետային դիրքը մեղմ զսպողական է՝ միաժամանակ տալով փաստականներին օժանդակելու, առողջապահության և հանրային ներդրումների ուղղությամբ ծախսեր կատարելու հնարավորություն: Միջնաժամկետ հեռանկարում պակասուրդի հետագա նվազեցումը, սոցիալական և կապիտալ առաջնահերթ ծախսերի համար հարկաբյուջետային հնարավորություններ (տարածք) ստեղծելուն համընթաց, հնարավոր կդառնա հարկման բազայի ընդլայնման և եկամուտների վարչարարության միջոցառումների հաշվին լրացուցիչ եկամուտների մոբիլիզացման, ինչպես նաև ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների միջոցով :

ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) դրամավարկային քաղաքականության նոր ծրագիրը, որի առանցքում ռիսկերի շրջահայաց կառավարումն է և թափանցիկության բարձր աստիճանը, օժանդակում է գնաճի 3 տոկոս ԿԲ թիրախին: Ճկուն փոխարժեքը շարունակում է արտաքին ցնցումների հիմնական կլանիչը լինել, ինչը, պահուստների առողջ բուֆերների հետ մեկտեղ, կշարունակի լավ ծառայել տնտեսությանը՝ արտաքին ցնցումների դեպքում:

Բանկային համակարգը լավ կապիտալացված և իրացվելի է, և հիփոթեքային վարկավորման աճը որոշ չափով նահանջել է: Կենտրոնական բանկի մշտադիտարկումը և մակրոպրոդեցնիալ գործիքներ

² ԱՄՆ-ի Համաձայնագրի հոդվածների համաձայն՝ անդամ երկրներին վերաբերող փաստաթղթերի հրապարակումը կամավոր է և անդամի համաձայնությունն է պահանջում: Աշխատակազմի զեկույցը շուտով կհրապարակվի <https://www.imf.org/en/countries/arm> էջում:

գործարկելու պարտաստվածությունը կօգնեն մեղմել վարկավորման շարունակական բարձր աճից առաջացող ռիսկերը: Մակրոպրոդենցիալ գործիքների հետագա զարգացումը և ՀՀ ԿԲ նորմատիվային և վերահսկողական կարգավորումների և գործիքակազմի հետագա ամրապնդումը է՛լ ավելի կուժեղացնեն ֆինանսական համակարգի դիմակայունությունը:

Կառուցվածքային բարեփոխումներն անհրաժեշտ է արագացնել՝ աշխատուժի մասնակցության և զբաղվածության ցուցանիշը բարձրացնելու և արտահանման բազմազանեցմանն օժանդակելու համար: Ներդրումային միջավայրի բարելավումները՝ ավելի լավ կառավարման և բիզնեսի համար իրավական դաշտի ամրապնդման միջոցով, կօժանդակեն այս բարեփոխումներին: Վիճակագրական հաշվետվությունների որակի բարելավման ուղղությամբ հետագա քայլերը կօգնեն օժանդակել որոշումների կայացմանը:

Գործադիր խորհրդի քննարկումից հետո, Կառավարող տնօրենի տեղակալ և նախագահի պաշտոնակատար պրն. Լին արեց հետևյալ հայտարարությունը.

«Վերջին տարիներին Հայաստանը հաջողությամբ հաղթահարել է բազմաթիվ մարտահրավերներ՝ մակրոտնտեսական և ֆինանսական կայունությունը պահպանելով: Տնտեսության հեռանկարը դրական է մնում՝ աճի ներուժի մեծացման և իր թիրախին գնաճի մոտենալու պայմաններում: Ընթացիկ «Պահուստային ծրագրի» (SBA) շրջանակում կատարողականը բարձր է եղել: Քաղաքականության շրջահայացության պահպանումը և բարեփոխումների արագացումը, հաջորդ «Պահուստային ծրագրի» օժանդակությամբ, որը իշխանությունները նախատեսում են դիտարկել որպես կանխարգելիչ, կարևոր կլինի դիմակայունության հետագա ամրապնդման և ներառական ու կայուն աճի ապահովման համար:

2026 թ. բյուջեով քաղաքականության շեշտադրումը հարկաբյուջետային կոնսոլիդացմանը տեղին է՝ միաժամանակ քաղաքականության առաջնահերթությունների համար հնարավորություն (տարածք) պահպանելով, այդ թվում փախստականների աջակցության, առողջապահության և հանրային ներդրումների համար: Միջնաժամկետ հեռանկարում եկամուտների մոբիլիզացումը և հանրային ներդրումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ուղղությամբ առաջընթացը, տարածք կստեղծեն առաջնահերթ ծախսերի համար՝ միաժամանակ ավելի նվազեցնելով բյուջեի պակասուրդը, այդպիսով ապահովելով պետական պարտքի չափավոր մակարդակ:

ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) դրամավարկային քաղաքականության նոր ծրագիրը, որի առանցքում ռիսկերի շրջահայաց կառավարումն է և որը համակցված է թափանցիկության բարձր աստիճանով, օժանդակում է ՀՀ ԿԲ գնաճի 3 տոկոսի թիրախին: Անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն շարունակի վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույթի գործողությունների ստուգաճշտումը՝ գնաճը թիրախին մոտ պահելու և գնաճի սպասումների լավ խարսխման համար: Ճկուն փոխարժեքը Հայաստանին լավ է ծառայել արտաքին ցնցումների կլանման հարցում՝ միաժամանակ պահուստների բուֆերներ ստեղծելով:

Վարկավորման շարունակական բարձր աճի պայմաններում, պայմանավորված շինարարության ոլորտին և սպառողներին տրամադրված վարկերով, ՀՀ ԿԲ-ն պետք է պատրաստ լինի մակրոպրոդենցիալ գործիքների գործարկմանը՝ ֆինանսական կայունության ռիսկերը

մեղմելուն պատակով: Առանցքային են նաև մակրոպրոդյուցիալ գործիքակազմի հետագա կատարելագործումը և վերահսկողական կարգավորումների ուժեղացումը:

Կառուցվածքային բարեփոխումների խորացումը և կառավարման ամրապնդումը կօժանդակեն կայուն և ներառական աճին: Իշխանությունների ջանքերը՝ բարձրացնելու մասնակցությունը աշխատաշուկայում և կրճատելու կառուցվածքային գործազրկությունը, բազմազանեցնելու արտահանումը և բարձրացնելու թափանցիկությունը և մրցունակությունը, կնպաստեն տնտեսական դիմակայանության բարձրացմանը և կխթանեն Հայաստանի տնտեսական աճի ներուժը: Վիճակագրական հաշվետվությունների որակի բարելավումը կարևոր կլինի որոշումների կայացմանն օժանդակելու համար»:

Գործադիր խորհրդի գնահատականը³

Գործադիր տնօրենները համաձայն էին աշխատակազմի գնահատման ուղղվածության հետ: Նրանք դրվատեցին ծրագրով Հայաստանի բարձր շահագրգռվածությունը և առողջ քաղաքականությունները, որոնք նպաստել են երկրի մակրոտնտեսական և ֆինանսական կայունությանը՝ չնայած համաշխարհային և տարածաշրջանային դժվարին միջավայրին: Տնօրենները համաձայն էին, որ հաջորդ «Պահուստային ծրագիրը», որը իշխանությունները մտադիր են դիտարկել որպես կանխարգելիչ, Հիմնադրամի տեխնիկական աջակցության օժանդակությամբ կօգնի պահպանել քաղաքականության շրջահայացությունը, խարսխել բարեփոխման տեմպը և խթանել տնտեսության նկատմամբ վստահությունը:

Տնօրենները ողջունել են հարկաբյուջետային շրջանակի նշանակալի բարելավումները: Նրանք ընդգծել են հարկաբյուջետային աստիճանական կոնսոլիդացման առաջնության կարևորությունը, և այս առումով ողջունել իշխանությունների 2026 թ. բյուջեի նախագիծը և միջնաժամկետ ծախսերի ծրագրում նախատեսված թիրախները: Տնօրենները շեշտել են, որ լրացուցիչ եկամուտների մոբիլիզացումը խիստ կարևոր է առաջնահերթ ծախսերին ուղղված հարկաբյուջետային տարածք ստեղծելու համար՝ միաժամանակ ավելի նվազեցնելով բյուջեի պակասուրդը: Նրանք առաջարկել են նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումներ՝ հարկաբյուջետային պլանավորումն ամրապնդելու, հանրային ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու և հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը կատարելագործելու համար:

Տնօրենները դրվատել են ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) հաջողությունը՝ գնաճի զսպման հարցում և համաձայնել դրամավարկային քաղաքականության տվյալահեն մնալու անհրաժեշտության հետ: Նրանք ողջունել են ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակի բարելավումները և թափանցիկության բարձրացումը և խրախուսել հետագա բարելավումները՝ դրամավարկային

³ Քննարկման ավարտին Կառավարող տնօրենը, որպես Խորհրդի նախագահ, ամփոփում է Գործադիր տնօրենների կարծիքները, և այդ ամփոփումը փոխանցվում է երկրի իշխանություններին: Ամփոփումներում օգտագործված վերապահումների բացատրությանը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.IMF.org/external/np/sec/misc/qualifiers.htm>:

քաղաքականության փոխանցումը բարելավելու համար: Տնօրենները համաձայնել են, որ ճկուն փոխարժեքը պետք է շարունակի ծառայել որպես ցնցման հիմնական կլանիչ:

Տնօրենները նշել են բանկային համակարգի լավ կապիտալացման և իրացվելի լինելու դրական հանգամանքը: Նշելով վարկային ռիսկերի բարձրացման մասին, նրանք խրախուսել են ՀՀ ԿԲ նորմատիվային և վերահսկողական կարգավորումների կատարելագործումը և հորդորել են ՀՀ ԿԲ-ին պատրաստ լինել լրացուցիչ մակրոպրոդենցիալ գործիքների գործարկմանը՝ ըստ անհրաժեշտության: Կարևոր է նաև նախատեսվող սթեյբիլիտյանի կարգավորման առաջ մղումը:

Տնօրեններն առաջարկել են արագացնել կառուցվածքային բարեփոխումները՝ տնտեսությունն արդիականացնելու և մասնավոր հատվածի կողմից առաջնորդվող, աշխատատեղերով հարուստ աճը խթանելու համար: Նրանք խրախուսել են իրականացնել միջոցառումներ՝ մեծացնելու աշխատուժի մասնակցությունը և զբաղվածությունը, ինչպես նաև աջակցելու արտահանման բազմազանացմանը: Առանցքային են նաև ներդրումային միջավայրի բարելավման, կառավարման և մրցունակության կատարելագործման և երկարաժամկետ էներգետիկ անվտանգությունը բարելավելուն ուղղված բարեփոխումները: Տնօրենները կարևորել են վիճակագրական հաշվետվությունների որակի բարելավումը որոշումների կայացմանն օժանդակելու համար:

Ակնկալվում է, որ Հայաստանի Հանրապետության հետ Հոդված IV-ի հաջորդ խորհրդակցությունը տեղի կունենա Հիմնադրամի հետ ծրագրեր ունեցող անդամների հետ խորհրդակցության շրջափուլերի վերաբերյալ Գործադիր խորհրդի որոշման համաձայն:

Աղյուսակ 1. Հայաստան. Ընտրված տնտեսական և ֆինանսական ցուցանիշներ, 2022-27 թթ.						
	2022	2023	2024	2025	2026	2027
Կանխատեսումներ						
Ազգային եկամուտ և զներ						
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	12.6	8.3	5.9	5.0	5.5	5.5
Նպաստումը աճին						
Վերջնական սպառման ծախսեր	3.5	5.1	4.0	3.3	3.1	4.0
Հիմնական կապիտալի համախառն կուտակում	3.0	3.0	2.6	2.1	1.8	1.3
Պաշարների փոփոխություն	-0.8	-0.2	-0.3	-1.1	0.0	0.0
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում	6.2	0.0	2.3	-1.0	0.0	0.1
Համախառն ներքին արդյունք (մլրդ.դրամ)	8,501	9,493	10,193	10,992	11,945	12,984
ՀՆԱ (միլիոն ԱՄՆ դոլար)	19,979	24,153	26,010	27,903	29,025	30,803
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	6,695	7,961	8,528	9,041	9,434	10,045
ՍԳԻ (Ժամանակահատվածի վերջ, տոկոսային փոփոխություն)	8.4	-0.7	1.7	3.5	3.1	3.0
ՀՆԱ-ի դեֆլատոր (տոկոսային փոփոխություն)	8.0	3.1	1.4	2.7	3.0	3.0
Գործազրկության մակարդակ (տոկոս)	13.5	12.4	13.9	13.7	13.6	13.5
Ներդրումներ և խնայողություն (ՀՆԱ-ի տոկոս)						
Ներդրումներ	22.4	22.9	23.8	24.7	23.5	23.1
Ազգային խնայողություններ	23.1	20.2	19.2	20.2	19.0	18.7
Փող և վարկ (Ժամանակահատվածի վերջ)						
Փողի բազա (տոկոսային փոփոխություն)	5.0	-4.0	13.8	14.9	13.4	14.1
Փողի զանգված (տոկոսային փոփոխություն)	16.1	17.4	13.7	8.6	16.2	16.1
Մասնավոր հատվածի վարկավորման աճ (տոկոսային փոփոխություն)	4.5	18.4	26.4	16.8	16.3	16.4
Կենտրոնական կառավարության գործառնություններ (ՀՆԱ-ի տոկոս)						

Եկամուտներ և դրամաշնորհներ	24.3	24.9	25.3	25.6	25.8	25.8
<i>Որից՝ հարկային եկամուտներ</i>	21.9	22.5	22.4	23.4	23.7	23.7
Ծախսեր	26.4	26.9	29.0	30.6	30.3	29.3
Ընդհանուր հաշվեկշիռը՝ դրամարկղային հիմունքով	-2.1	-2.0	-3.7	-5.0	-4.5	-3.5
Պետական և պետության կողմից երաշխավորված պարտք	46.7	48.2	48.0	50.3	51.5	51.8
Արտարժույթով պարտքի մասնաբաժին (տոկոսով)	52.7	48.2	48.1	47.2	47.9	47.8
Արտաքին հատված						
Ապրանքների և ծառայությունների արտահանում (միլիոն ԱՄՆ դոլար)	10,339	14,718	19,072	13,131	13,416	13,877
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (միլիոն ԱՄՆ դոլար)	-10,439	-15,062	-19,804	-14,244	-14,539	-15,074
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխություն)	107.7	42.3	29.6	-31.1	2.2	3.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխություն)	71.3	44.3	31.5	-28.1	2.1	3.7
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի տոկոս)	0.7	-2.8	-4.6	-4.5	-4.5	-4.4
ՕՈՒՆ (զուտ, միլիոն ԱՄՆ դոլար)	926	527	75	397	446	459
Համախառն միջազգային պահուստներ (միլիոն ԱՄՆ դոլար)	4,112	3,608	3,684	4,159	4,297	4,489
Ներմուծման ծածկույթ 1/	3.3	2.2	3.1	3.4	3.4	3.5
Ժամանակահատվածի վերջի փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	394	405	397	...	...	...
Աղբյուրը՝ Հայաստանի իշխանություններ և Հիմնադրամի աշխատակազմի գնահատականներ և կանխատեսումներ:						
1/ Միջազգային պահուստներ՝ ըստ հաջորդ տարի ապրանքների և ծառայությունների ներմուծման ամիսների, պահվող ՓՀԻ-ը ներառյալ:						